Հ ա վ ե լ վ ա ծ
ՀՀ կառավարության 2010 թվականի
նոյեմբերի 25-ի N 1551 -Ն որոշման

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՈՒ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ ԲԽՈՂ 2011-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Միջոցառման անվանումը | Պատասխա-նատու կատարողը | Համակատա-րողը | Կատարման ժամկետը | Ակնկալվող արդյունքները | Ֆինանսավոր-ման աղբյուրը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| **1.** | **Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման օրենսդրական ու ինստիտուցիոնալ կատարելագործում** | | | | | |
| 1.1. | Բնապահպանական կրթության և դաստիարակության համակարգի օրենսդրական հիմքերի ու ինստիտուցիոնալ կառուցվածքի վերլուծություն, կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակում` նպատակ ունենալով ուժեղացնելու բնապահպանական կրթության և դաստիարակության դերը ՀՀ կրթական համակարգում` առավելագույնս շեշտադրելով բնապահպանական խնդիրները և հնարավորինս օպտիմալացնելով համակարգի ինստիտուցիոնալ կառուցվածքը | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ կրթության և գիտության նախարարություն (ՀՀ կրթության ազգային ինստիտուտ), բարձրագույն ուսումնական հաստատություններ (այսուհետ` բուհեր) (համաձայնությամբ) | 2011-2012 թթ. | բնապահպանական կրթության և դաստիարակության համակարգի կատարելագործման համար նախադրյալների ստեղծում | ՀՀ պետական բյուջեով նախատեսված պահպանման ծախսերի սահմաններում |

10_1551

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| 1.2. | Բնապահպանական կրթության և դաստիարակության համակարգի օրենսդրական հիմքերի ու ինստիտուցիոնալ կառուցվածքի կատարելագործման մասին օրենսդրության փոփոխության ժամանակացույցի մշակում և ՀՀ վարչապետի որոշման նախագիծ ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, բուհեր (համաձայնությամբ) | 2013 թ. | բնապահպանական կրթության և դաստիարակության համակարգի բարելավման համար նախատեսված օրենսդրական ու ինստիտուցիոնալ փոփոխությունների ամրագրման ապահովում | ՀՀ պետական բյուջեով նախատեսված պահպանման ծախսերի սահմաններում |
| 1.3. | Բնապահպանական կրթության և դաստիարակության բոլոր մակարդակների համար (նախադպրոցական, միջնակարգ, միջին մասնագիտական, բուհական, հետբուհական) չափորոշիչների մշակում և հաստատում՝ պահպանելով ներդաշնակությունը կրթական բոլոր մակարդակներում իրականացվող բարեփոխումների, ինչպես նաև միջազգային կրթական ստանդարտների (պահանջների) հետ | ՀՀ կրթության և գիտության նախարարություն (ՀՀ կրթության ազգային ինստիտուտ) | ՀՀ բնապահպանության նախարարություն, բուհեր (համաձայնությամբ) | 2014-2015 թթ. | բնապահպանական կրթության և դաստիարակության գիտելիքների կանոնակարգված ձեռքբերման ու գնահատման ապահովում | ՀՀ պետական բյուջեի ծրագրային ֆինանսավորում |
| 1.4 | «Հայաստանի Հանրապետության վարչապետի 1998 թվականի օգոստոսի 3-ի «Էկոլոգիական կրթության միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» N 464 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի մշակում և ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ բնապահպա-նության նախարարություն | | 2012 թ. | միջգերատեսչական համագործակցության ուժեղացում | ՀՀ պետական բյուջեով նախատեսված պահպանման ծախսերի սահմաններում |
| **2.** | **Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ոլորտում հզորությունների ստեղծում** | | | | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| 2.1. | Երկրի արդի սոցիալ-տնտեսական իրավիճակին և ազգային առանձնահատկություններին համահունչ բնապահպանական կրթության նորացված մեթոդաբանության մշակում (կրթական բոլոր մակարդակների համար)՝ հաշվի առնելով ավանդական և ժամանակակից մեթոդներն ու միջազգային փորձը, ինչպես նաև «Կրթություն՝ հանուն կայուն զարգացման» ռազմավարության թեմատիկան և բնապահպանական նշանակության գործնական պարապմունքների անցկացման կարևորությունը | ՀՀ կրթության և գիտության նախարարություն (ՀՀ կրթության ազգային ինստիտուտ) | ՀՀ բնապահպանության նախարարություն, բուհեր (համաձայնությամբ) | 2014-2015 թթ. | բնապահպանական կրթության և դաստիարակության միասնական համակարգի ներդրման մեթոդաբանական հիմքերի ապահովում | ՀՀ պետական բյուջեի ծրագրային ֆինանսավորում |
| 2.2. | Կրթական տարբեր մակարդակների համար բնապահպանական կրթության և դաստիարակության հայալեզու ուսումնական ձեռնարկներում «Կրթություն՝ հանուն կայուն զարգացման» ռազմավարության առանցքային թեմաների ներառում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն (ՀՀ կրթության ազգային ինստիտուտ) | ՀՀ բնապահպանության նախարարություն, բուհեր (համաձայնությամբ) | 2012 թ. շարունակական | բնապահպանական կրթության և դաստիարակության ժամանակակից սկզբունքների և մոտեցումների ներդրում | ՀՀ պետական բյուջեով նախատեսված պահպանման ծախսերի սահմաններում |
| 2.3. | Բնապահպանական կրթության և դաստիարակության տարբեր մակարդակների համար դիդակտիկ նյութերի, ինտերակտիվ խաղերի, բուկլետների, գովազդային հոլովակների, մուլտիպլիկացիոն կինոնկարների և այլ հանրամատչելի կրթադաստիարակչական ու տեղեկատվական նյութերի պատրաստման վերաբերյալ առաջարկությունների մշակում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն (ՀՀ կրթության ազգային ինստիտուտ) | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2012-2013 թթ. | հանրամատչելի կրթադաստիարակչական տեղեկատվական նյութերի միջոցով բնապահպանական գիտելիքների տարածում | ՀՀ պետական բյուջեով նախատեսված պահպանման ծախսերի սահմաններում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| 2.4. | Նախադպրոցական և միջնակարգ կրթական համակարգում էկոլոգիական ուղղվածություն ունեցող նախադպրոցական հաստատությունների, դասարանների, էկոլոգիական կրթական կենտրոնների ստեղծման հնարավորությունների հետա-զոտում և դրա վերաբերյալ առաջարկությունների մշակում | ՀՀ բնապահ-պանության նախարա-րություն | ՀՀ կրթու-թյան և գի-տության նա-խարարու-թյուն (ՀՀ կրթու-թյան ազգա-յին ինստի-տուտ) | 2014-2015 թթ. | բնապահպանա-կան կրթության և դաստիարակու-թյան միասնական համակարգի ամրապնդման և ընդլայնման ապահովում | ՀՀ պետական բյուջեով նա-խատեսված պահպանման ծախսերի սահ-մաններում |
| 2.5. | Միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական բնապահպանական կրթությամբ մասնագետների առավել բարձր պահանջարկ ունեցող մարզերում համապատասխան մասնագիտությամբ և որակավորմամբ մասնագետների պատրաստման վերաբերյալ առաջարկությունների մշակում՝ հաշվի առնելով մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունները և բնապահպա-նական հիմնախնդիրները | ՀՀ բնապահ-պանության նախարա-րություն | ՀՀ կրթու-թյան և գի-տության նախարարու-թյուն, բուհեր (համաձայ-նությամբ), ՀՀ մարզպե-տարաններ, տեղական ինքնակառա-վարման մարմիններ (համաձայ-նությամբ) | 2013-2014 թթ. | բնապահպանա-կան կրթության մասնագետների պատրաստման պետական պատ-վերի հիմնավոր-ված ձևավորում | ՀՀ պետական բյուջեով նա-խատեսված պահպանման ծախսերի սահ-մաններում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| **3.** | **Հասարակության լայն խավերի բնապահպանական կրթություն, դաստիարակություն և իրազեկում** | | | | | |
| 3.1. | «Օրհուսէ երևանյան կենտրոնի և մարզային կենտրոնների տեղեկատվական ու նյութատեխնիկական ապահովման բարելավում | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ մարզպետարաններ, հասարակական կազմակերպություններ (այսուհետ` ՀԿ-ներ) (համաձայնությամբ) | 2011 թ. շարունակական | բնապահպանական խնդիրների մասին տեղեկատվության մատչելիության ապահովում, իրազեկության բարձրացում | ՀՀ պետական բյուջեով նախատեսված պահպանման ծախսերի սահմաններում, միջազգային ֆինանսավորում |
| 3.2. | Բնապահպանական հարցերի շուրջ կլոր սեղանների, սեմինարների, միջազգային բնապահպանական օրերին նվիրված միջոցառումների անցկացում | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, բուհեր (համաձայնությամբ), ՀՀ մարզպետարաններ, ՀԿ-ներ (համաձայնությամբ) | 2011 թ. շարունակական | բնապահպանական գիտելիքների և տեղեկատվության տարածման ապահովում | ՀՀ պետական բյուջեով նախատեսված պահպանման ծախսերի սահմաններում, միջազգային ֆինանսավորում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| 3.3. | Հանրային գրադարաններում բնապահպանական ուղղվածություն ունեցող գրականության ավելացմանն աջակցություն | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, բուհեր, ՀԿ-ներ (համաձայնությամբ) | 2012 թ. շարունակական | հասարակայնության լայն շրջանների համար բնապահպանական ուղղվածություն ունեցող նյութերի մատչելիության ապահովում | ՀՀ պետական բյուջեով նախատեսված պահպանման ծախսերի սահմաններում |
| 3.4. | Ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխան՝ Հայաստանի բնության թանգարանի արդիականացման ծրագրի մշակում և իրականացում | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ մշակույթի նախարարություն, բուհեր (համաձայնությամբ) ՀԿ-ներ (համաձայնությամբ) | 2012-2015 թթ. | ժամանակակից մոտեցումներին և սկզբունքներին համահունչ գործող Հայաստանի բնության թանգարան | ՀՀ պետական բյուջեի ծրագրային ֆինանսավորում |
| **4.** | **Բնապահպանական կրթության և դաստիարակության ոլորտում կադրերի պատրաստում ու վերապատրաստում** | | | | | |
| 4.1. | Կրթության բոլոր մակարդակներում բնապահպանական կրթություն և դաստիարակություն իրականացնող բոլոր մասնագետների համար վերապատրաստման ծրագրերի մշակում ու ներդրում՝ ՀՀ տնտեսական և կրթական բարեփոխումներին ներդաշնակ և «Կրթություն՝ հանուն կայուն զարգացմանե սկզբունքներին համահունչ | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | ՀՀ բնապահպանության նախարարություն (ՀՀ կրթության ազգային ինստիտուտ), բուհեր (համաձայնությամբ) | 2014 թ. շարունակական | բնապահպանական կրթություն և դաստիարակություն իրականացնող մասնագետների որակավորման բարձրացում | ՀՀ պետական բյուջեի ծրագրային ֆինանսավորում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| 4.2. | Նախադպրոցական համակարգի դաստիարակների բնապահպանական գիտելիքների ձեռքբերման ու կատարելագործման ծրագրի մշակում<br><br>- ծրագրի իրականացում՝ դաստիարակների ուսուցման կազմակերպում, տեղեկատվական նյութերի պատրաստում և տպագրում, նախադպրոցական հիմնարկների նյութատեխնիկական բազայի բարելավում | ՀՀ բնապահպանության նախարարություն<br><br>ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ կրթության և գիտության նախարարություն (ՀՀ կրթության ազգային ինստիտուտ) | 2014 թ.<br><br>2015 թ. շարունակական | բնապահպանական դաստիարակության մակարդակի բարձրացում, դաստիարակների բնապահպանական գիտելիքների և ունակությունների զարգացում | ՀՀ պետական բյուջեի ծրագրային ֆինանսավորում<br><br>ՀՀ պետական բյուջեի ծրագրային ֆինանսավորում |
| 4.3. | Միջնակարգ կրթական համակարգում բնապահպանական ուղղվածությամբ թեմատիկ մրցույթների, օլիմպիադաների, կլոր սեղանների կազմակերպում՝ երիտասարդներին համապատասխան մասնագիտական կողմնորոշում տալու նպատակով | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2012 թ. շարունակական | երիտասարդության շրջանում բնապահպանական ոլորտի նկատմամբ հետաքրքրության ուժեղացում | ՀՀ պետական բյուջեով նախատեսված պահպանման ծախսերի սահմաններում |
| 4.4. | «Կրթություն՝ հանուն կայուն զարգացման» ռազմավարության հիմնախնդիրների ընդգրկմամբ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների, տնտեսավարող սուբյեկտների, լրագրողների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար բնապահպանության ոլորտում որակավորման բարձրացման, գիտելիքների ձեռքբերման դասընթացների պարբերաբար կազմակերպում (թիրախային խմբերի որոշում, տեղեկատվական փաթեթների ստեղծում, դասընթացների անցկացում և այլն) | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀԿ-ներ (համաձայնությամբ) | 2014 թ. շարունակական | հասարակայնության տարբեր թիրախային խմբերում բնապահպանական գիտելիքների ձեռքբերման հնարավորությունների ստեղծում | ՀՀ պետական բյուջեի ծրագրային ֆինանսավորում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| **5.** | **Միջազգային գիտակրթական համագործակցություն** | | | | | |
| 5.1. | Բնապահպանական կրթության և դաստիարակության միջազգային համակարգին ինտեգրվելու նպատակով միջազգային առաջատար փորձի, մեթոդաբանության և նորմատիվաիրավական դաշտի ուսումնասիրում, դրա մասին միջազգային չափանիշներին համահունչ տեղեկատվության տարածման ծրագրի մշակում<br><br>- ծրագրի իրականացում` ինտերնետային կայքերի, տեղեկատվական բազաների ստեղծում, տեղեկատվական նյութերի պատրաստում ու տպագրում և այլն | ՀՀ բնապահպանության նախարարություն<br><br>ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, բուհեր (համաձայնությամբ) | 2012-2013 թթ.<br><br>2014 թ. շարունակական | տեղեկատվության տարածման արդիական միջոցների օգտագործման ապահովում | միջազգային ֆինանսավորում<br><br>միջազգային ֆինանսավորում, ՀՀ պետական բյուջեի ծրագրային ֆինանսավորում |
| 5.2. | Բնապահպանական կրթության և տեղեկատվության փոխանակման տարածաշրջանային ուսումնամեթոդական կենտրոնի ստեղծում` կադրային և ժամանակակից տեխնիկական ներուժի ապահովմամբ (օգտագործելով «Ջիկատարե ուսումնական կենտրոնի հնարավորությունները) | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, բուհեր (համաձայնությամբ) | 2013-2015 թթ. | տարածաշրջանային մակարդակով բնապահպանական կրթության և տեղեկատվության փոխանակման կայուն հիմքերի ստեղծում | միջազգային ֆինանսավորում |
| 5.3. | Երիտասարդական էկոլոգիական ճամբարների ստեղծման (հատկապես գյուղական համայնքներում) հնարավորությունների հետազոտում, դրա վերաբերյալ առաջարկությունների մշակում | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ կրթության և գիտության նախարարություն,<br><br>ՀՀ մարզպե- | 2014-2015 թթ. | բնապահպանական մտածելակերպի ձևավորման և կիրառական գիտելիքների ձեռքբերման | միջազգային ֆինանսավորում<br><br>ՀՀ պետական |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| | | | տարաններ, տեղական ինքնակառա-վարման մարմիններ (համաձայ-նությամբ) | | հնարավորու-թյունների ստեղծում | բյուջեի ծրա-գրային ֆինանսա-վորում |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ                                        Դ. ՍԱՐԳՍՅԱՆ